

ՀԱՍՏԱԳՈՐԾԱՎՅՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

MEMORANDUM OF UNDERSTANDING

“Գավառի պետական համալսարան” պետական ոչ առևտրային կազմակերպության և Օրանժ Արմենիա փակ բաժնետիրական ընկերության միջև

Between “Gavar State University“ non-commercial state organization and Orange Armenia closed joint stock company

Ներքոստորագրյալները՝

The undersigned:

- (1) Գավառի պետական համալսարան ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), ի դեմս ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի, որը գործում է ԳՊՀ-ի կանոնադրության հիման վրա, և
- (2) Օրանժ Արմենիա ՓԲԸ-ն (այսուհետ՝ Օրանժ), ի դեմս Գլխավոր տնօրեն Բրունո Դութուայի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,

- (1) Gavar State University NCSO (hereafter referred to as GSU), represented by Ruzanna Hakobyan, acting on the basis of the GSU Charter and
- (2) Orange Armenia CJSC (hereinafter referred to as Orange), represented by General Director Bruno Duthoit, acting on the basis of the company’s Charter,

կնքեցին սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) 14.12.2011թ., Գավառում:

have entered into this Memorandum of Understanding (hereinafter referred to as Memorandum) in Gavar, on 14.12.2011.

Հուշագրի հիմնական նպատակն է ԳՊՀ-ի և Օրանժի միջև հաստատել համագործակցություն՝ ի նպաստ երկու հաստատությունների միջև կրթական և գործնական հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը:

The purpose of this Memorandum is to establish cooperation between GSU and Orange which will contribute to the improvement of educational and business relations between the parties.

1. Այդ նպատակով կողմերը մտադիր են համագործակցել հետևյալ ծրագրերի շրջանակներում՝

1. To that purpose, the parties intend to cooperate within the framework of the following programs:

- 1.1. Օրանժի աշխատակիցների մասնակցությամբ կլոր սեղանների և թեմատիկ սեմինարների անցկացում.
- 1.2. ԳՊՀ-ի ուսանողներին Օրանժի կողմից կրթաթոշակների հատկացում.
- 1.3. ԳՊՀ-ի ուսումնական ծրագրերի կազմման հարցում Օրանժի մասնագետների ներգրավում՝ որպես խորհրդատուներ:
- 1.4. Օրանժի գրասենյակներ այցելությունների կազմակերպում, պրակտիկաների անցկացում:

- 1.1. Carrying out thematic seminars and round tables with the participation of employees of Orange.
- 1.2. Allocating scholarships to GSU students by Orange.
- 1.3. Engaging Orange’s specialists as consultants while developing CSU’s curriculums.
- 1.4. Company tours in Orange service centers and headquarters.

2. Կողմերը մտադիր են 1-ին կետով սահմանված և նմանատիպ այլ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտության դեպքում կնքել համապատասխան պայմանագրեր, որոնցով կկարգավորվեն ծրագրերի իրականացման գործընթացները:
2. The parties intend to conclude agreements, if necessary, for the implementation of the programmes defined in point 1 above or other similar programmes, which agreements will determine the details of the programmes and their implementation.
3. Կողմերը պարտավորվում են գաղտնի պահել Հուշագրի կնքման փաստը՝ մինչև իրենց կողմից դրա մասին համատեղ պաշտոնական հրապարակումը՝ մամուլի ասուլիսի ժամանակ:
3. The Parties undertake to keep confidential the existence of this Memorandum until they officially announce it together during a press conference.
4. Կողմերը պարտավորվում են չհրապարակել նաև սույն Հուշագրի վերաբերյալ իրենց կողմից վարվող բանակցությունների փաստը և դրանց բովանդակությունը:
4. The Parties undertake to keep secret the negotiations being conducted between them around this Memorandum and the content of such negotiations.
5. Սույն Հուշագիրը հիմք է հանդիսանում բացառապես հետագա քննարկումների համար, չի հանդիսանում իրավական փաստաթուղթ և որևէ իրավական հետևանք չի առաջացնում: Իրականացված կամ իրականացվելիք որևէ արարք, գործողություն, կամ սույն Հուշագրին անհամապատասխան գործելը կամ սույն Հուշագրի դրույթների շուրջ բանակցությունները Կողմերի համար չեն առաջացնում որևէ պարտավորություն կամ պատասխանատվություն կամ հիմք չեն հանդիսանում դրանց առաջացման համար:
5. This Memorandum is solely a basis for further discussion and is not intended to be and does not constitute a legally binding document and does not have any legal consequences. No past or future action, course of conduct, or failure to act according to this Memorandum, or the negotiation of terms of this Memorandum, will give rise to or serve as a basis for any obligation or other liability for the parties.
6. Սույն Հուշագրի դրույթները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
6. This Memorandum shall be governed by the Republic of Armenia.
7. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 (հինգ) տարի ժամկետով: Եթե կողմերից որևէ մեկը ժամկետն ավարտվելուց առնվազն 3 (երեք) ամիս առաջ մյուս կողմին գրավոր չձանուցի Հուշագիրը դադարեցնելու իր մտադրության մասին, ապա Հուշագրի գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի ևս 5 (հինգ) տարով:
7. This Memorandum shall enter into force upon signature and remain in force for 5 (five) years. If at least 3 (three) months prior to the expiry of the Memorandum none of the parties notifies the other in writing about its intention to terminate the Memorandum, the Memorandum will be automatically prolonged for five more (5) years.

8. Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ միակողմանի դադարեցնել սույն Հուշագրի գործողությունը նախապես 1 (մեկ) ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս կողմին՝ ընթացքում գտնվող միջոցառումների պարտադիր ավարտման պայմանով:
8. Each Party may unilaterally terminate this Memorandum at any time by 1 (one) month's prior written notice to the other Party, on the condition that ongoing events will be completed.
9. Սույն Հուշագիրը կնքվում է անգլերենով և հայերենով, երկու հավասարազոր բնօրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է սույն Հուշագրի մեկ օրինակ: Տարբերակների միջև անհապատասխանության դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:
9. This Memorandum is made in English and Armenian, in two originals of equal force, one for each Party. In case of inconsistencies between the English and Armenian versions, the Armenian version shall prevail.

Գավառի պետական համալսարան ՊՈԱԿ
 ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
 Ազատության 1 փող.
 Հեռ.՝ +374 10 282075
 Ֆաքս՝ +374 10 282075
 ՀՎՀՀ 08402753
 <Անելիք բանկ> ՓԲԸ Պայազատ մ/ճ
 h/h 118061043626

Gavar State University NCSO
 1 Azatutyun str., Gavar, Gagharunik Marz,
 Republic of Armenia
 phone: +374 10 282075
 fax: +374 10 282075
 Taxpayer code: 08402753
 "Anelik Bank" CJSC, Payazat Branch
 Bank account: 118061043626

Ռեկտոր
 Ռ. Հակոբյան



Rector
 R. Hakobyan

R. Hakobyan

Օրանժ Արմենիա ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Վ. Վաղարշյան 8/1 փող.
 Հեռ.՝ +374 10 598320
 Ֆաքս՝ +374 10 598320 ext. 5806
 ՀՎՀՀ 00098599
 ԷյՋ Էս Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ
 h/h 003-556677-001

Orange Armenia CJSC
 8/1, Vagharshyan str., Yerevan, RA
 phone: +374 10 598320
 fax: +374 10 598320 ext. 5806
 Taxpayer code: 00098599
 HSBC Bank Armenia.
 Bank account 003-556677-001

Գլխավոր տնօրեն
 Բ. Դուտուա



General Director
 B. Duthoit

B. Duthoit